

ծաղկեցոյց: 16 Եւ ձեզ ըստ նմին արինակի պարտ է ի վերայ մեղուցեալ անդամոյն խնդրել զողորմութիւն, եւ ոչ անարինաց մատնելով՝ ի ծաղր եւ յայպանումն տալ զսուրբ խորհուրդ հաւատոյս մերոյ: 17 Յիշեցէ՛ք զսուրբ հայրն իմ՝ եւ զձեր եւ զվարդապետն, որ եւ զփոխեալն յանասնական բնութեանն կերպարանս, հառաչանաւք եւ անդադար խնդրուածովք զցայգ եւ զցերեկ ածեալ ի գութս² զամենեցուն արարիչն Քրիստոս³՝ ի նոյն հաստատեաց ի մարդկային բնութիւնս: 18 Եւ դուք աշակերտեալք նորին հոգեւոր վարդապետիւք⁴ միաբանութեամբ առ հասարակ արք եւ կանայք, ծերք եւ տղայք զխնդրուածս եւ զարտասուս⁵ ի մէջ առեալ հաշտեցուցէ՛ք զամենահնարն Աստուած, որում հնարաւորն է ամենայն, եւ ոչ ինչ տկարանայ առաջի ահեղ հրամանաց զարութեան նորա. եւ նա վճարէ մարդասիրապէս՝ զոր ի յոյժ դժուարինս կարծեցեալ է մեզ. որ եւ ետ իսկ վճիռ միամիտ եւ անթերահաւատ խնդրողացն, ասելով անսուտն Աստուած, թէ *Ուր իցեն երկու եւ երեք ժողովեալ յանուն իմ՝ ամենայն զոր ինչ եւ խնդրեսցեն ի Յաւրէ իմմէ՝ տացի նոցա*⁶: 19 Իսկ արդ՝ եթէ երկուցն եւ երիցն աներկմիտ խնդրողացն զամենայն հայցուածսն կատարէ Աստուած, ո՞րչափ եւս առաւել զայսչափ բազմութեան խնդիրսն շնորհէ Աստուած փութով, մանաւանդ թէ անձանձրոյթ եւս⁶ լինիցին խնդիրքն եւ ջերմ հառաչանաւք եւ անթերահաւատ յուսով. զիա՞րդ ոչ առաւել եւս քան զհայցուածսն մեծամեծ իրս վճարիցէ:

20 «Այլ վասն իմ որ ասեքդ⁷, եթէ միաբանեա՛ ընդ մեզ՝ ինձ քաւ լիցի մատնիչ լինել ճշմարիտ հաւատոյն մերոյ եւ անհաւատից զիմ հաւտի⁸ զմոլորեալ ոչխարն մատնել յայպանումն: 21 Չի թեպետ եւ մեղաւոր է, այլ դրոշմեալ է սուրբ աւագանին ծննդեամբ, հմուտ է փրկութեան խնդրոյն, լուեալ է զլուր քարոզութեան Աւետարանին կենաց: 22 Արդ՝ եթէ եր տանել առ բժիշկ առողջ զվիրաւոր եկեղեցւոյս իմոյ զոչխար⁹՝ փութայի եւ ոչ յապաղէի. այլ յամենախտալից¹⁰ ատեան մատուցանել զիմ հիւանդացեալ հոգւոյ որդի¹¹ եւ ոչ երբէք առնում յանձնս¹²: 23 Չի եթէ եր հաւատացեալ թագաւորի առաջի

1 Ձ. զհայրն իմ

2 ՁՏՏ. ածեալ ի գիտութիւն. *այսպէս ըստ Ճառ.*

3 ԲԳտ. ամենեցուն արարիչն Քրիստոսի

4 Թերեւս՝ վարդապետութեան

5 ՏՏ. *չիք* եւ զարտասուս

Բ Մատթ. ԺԸ 20

6 ՏՏ. *չիք* եւս

7 ՁՏՏ. վասն որ ասեքդ. *այսպէս ըստ Ճառ.*

8 Ձ. զհոտի

9 ՏՏ. ոչխար

10 Ձ. *նախ՝* յամենախտ, *յետոյ աւելացրած՝* ալից. Ատ. յամենախտալից

11 Ձ. *քերուածի վրայ գրուած՝* հոգոյ որդի

12 ՏՏ. որդի եւ ոչ երբէք յանձն առնում